ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ՝
ք. Երևան, Ալ. Մանուկյան 11
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ

ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ՝
Քոլեջ

ՊԱՇՏՈՆԸ՝
Ուսուցիչ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄԸ և ՄԱՍՆԱԳԻՏԱՑՈՒՄԸ
Հանրահաշիվ և երկրաչափություն

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԺԱՄԵՐ՝ ըստ դասացուցակի

«ՈՒՍՈՒՑՉԻ»-Ի ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

- պլանավորում և իրականացնում է սովորողների ուսուցումն ու դաստիարակությունը՝ հանրակրթության պետական և առարկայական չափորոշիչներին համապատասխան.
- ապահովում է կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական առարկայական չափորոշիչներով ամրագրված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն պահանջների յուրացումը սովորողների կողմից՝ կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ.
- բացահայտում, դիտարկում, հետազոտում և գնահատում է երեխաների ուսումնառության ընթացքում նկատված կրթական կարիքները.
- նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ.
- սովորողների մեջ զարգացնում է ինքնուրույնություն, նախաձեռնություն և ստեղծագործական ունակություններ՝ հաշվի առնելով յուրաքանչյուրի անհատական կարողությունները.
- հարգում և պաշտպանում է սովորողի իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու արժանապատվությունը.
- հետևողականորեն կատարելագործում է իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնում ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ.
- համագործակցում է սովորողների ծնողների կամ նրանց օրինական ներկայացուցիչների հետ՝ սովորողների կրթության կազմակերպման և ընտանեկան դաստիարակության հարցերում.
- համագործակցում է գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով.
- մասնակցում է հաստատության մեթոդմիավորումների (առարկայական մասնախմբերի) աշխատանքներին.

- պահպանում է ուսումնական հաստատության կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և կարգապահական կանոններով սահմանված պահանջները:

«ՈՒՍՈՒՑՉԻ»-Ի ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԸ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ՝

- ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ հաստատված նորմատիվ իրավական ակտերի այն դրույթները, որոնք վերաբերում են կրթության բնագավառին, կանոնակարգում են պաշտոնի նկարագրով ամրագրված լիազորությունները, որոնք ընդգրկված են, կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված՝ ուսուցչի վերապատրաստման հարցաշարերում,
- առարկայական չափորոշիչները և իր պաշտոնային պարտականություններին վերաբերող՝ համապատասխան նորմատիվ ակտերը, իրավական այլ փաստաթղթեր,
- մանկավարժության տեսության և մեթոդիկայի, հոգեբանության, մինչբժշկական օգնության հիմունքները,
- աշխատանքի անվտանգության, սովորողների կյանքի և առողջության պահպանման կանոնները

«ՈՒՍՈՒՑՉԻ»-Ի ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ՝

- Բարձրագույն կրթություն՝ մանկավարժական համապատասխան որակավորմամբ կամ բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժ

- Հայերեն լեզվի գերազանց իմացություն
- Օտար լեզվի իմացությունը կդիտվի որպես առավելություն
- Համակարգչային նվազագույն գիտելիքների իմացությունը պարտադիր է
- Պատասխանատվության բարձր զգացում
- Խիստ կարգապահություն
- Հաղորդակցվելու ունակություն
- Թիմում աշխատելու հմտություններ

ԴԻՄԵԼՈՒ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ **02.02.2023թ.**

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ՝

«Հանրահաշիվ և երկրաչափություն առարկայի ուսուցչի»-ի թափուր հաստիքի համար սույն մրցույթով հետաքրքրված և հայտարարության մեջ նշված պահանջներին համապատասխանող անձինք կարող են hr@sportedu.am էլեկտրոնային հասցեին ուղարկել հետևյալ փաստաթղթերը՝

1. *ինքնակենսագրություն (CV),*
2. *բարձրագույն կրթության վկայականի (դիպլոմի) պատճենը*
3. *աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք**

«թեմա» (subject) դաշտում նշելով պաշտոնի անվանումը՝ «Հանրահաշիվ և երկրաչափություն առարկայի ուսուցիչ» կամ վերը նշված փաստաթղթերի փաթեթը ներկայացնել ՀՖԿՍՊԻ հիմնադրամի ՄՌԿ և ընդհանուր բաժին (ք. Երևան, Ալ. Մանուկյան 11):

Հարցազրույցի կհրավիրվեն նախնական ընտրությունն անցած թեկնածուները:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ՀՖԿՍՊԻ ՄՌԿ և ընդհանուր բաժին, հեռ.՝ 010553310 (ներքին՝ 307)

**Ծանոթություն*
*եթե պաշտոնի հավակնորդը չունի **մանկավարժական համապատասխան որակավորմամբ բարձրագույն կրթություն,** ապա վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ մնացյալ բոլոր դեպքերում՝ ցանկալի*